# ՈՒՍՈՒՑՉԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՄՐՑՈՒՅԹ

<<ՀՀ Արագածոտնի մարզի Բերքառատի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենությունը հայտարարում է մրցույթ՝ ռուսաց լեզվի (12 դասաժամ),մաթեմատիկայի (17 դասաժամ), և ինֆորմատիկայի (7 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում (Ձև 1),մեկ լուսանկար 3x4 չափի,

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

-<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասն համապատասխան՝աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),

-ինքնակենսագրություն (Ձև 5)

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են մինչև հունիսի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:-00-ը,բացի շաբաթ,կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա հունիսի 29-ին ժամը 13:00-ին, ՀՀ Արագածոտնի մարզի Բերքառատի միջնակարգ դպրոցում. հասցեն՝ Արագածոտնի մարզ,գ. Բերքառատ,5-րդ փողոց,շենք՝1:

Տեղեկությունների համար զանգահարել 093-454-383 հեռախոսահամարով: